ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 2387-Ա/2 «16» նոյեմբերի 2023 թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 6–ի N 973-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի 2249-Ա/2 հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով 2023 թվականին վերապատրաստում իրականացնելու համար երաշխավորել Ուսուցման ազգային հիմնադրամին:

2. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի» հիմնադրամի «Շարունակական կրթության և դասախոսների վերապատրաստման» կենտրոնի և «Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամի հայտերը մերժել՝ համապատասխան մասնագետների փորձառության բացակայության և վերապատրաստման ծրագում և պլանում առկա թերությունների հիմքով, իսկ «Հույս և

Ապագա» երեխաների աջակցության և զարգացման բարեգործական հասարակական կազմակերպության հայտը մերժել՝ սահմանված ժամկետից ուշ հայտը ներկայացնելու պատճառով:

3. Հանձնարարել նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ պաշտոնապես հրապարակել երաշխավորված կազմակերպության ցանկը նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**